## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 190-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող, Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 13/2 հասցեի 373.5քմ մակերեսով հողամասը Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին:
Զեկ. Ա.Մարտիրոսյան
2. Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող, Դիլիջան քաղաքի Խորհուրդների փողոցի 2-րդ նրբ. թիվ 8/6 հասցեի 950.0քմ մակերեսով հողամասը Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին:
Զեկ. Ա. Մարտիրոսյան
3. Անհատույց օգտագործման նպատակով տրամադրված գույքը Դիլիջանի համայնքապետարանի գույքացանկում ընդգրկելու մասին:
Զեկ.Ա. Մարտիրոսյան
4.Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոցի թիվ 34/4 հասցեի 400.0քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ.Ա. Մարտիրոսյան
5. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոցի թիվ 42/1 հասցեի 134.2քմ և Անդրանիկի փողոցի թիվ 42/2 հասցեի 57.6քմ հողամասերն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ.Ա. Մարտիրոսյան
6. Դիլիջան համայնքի Գոշ գյուղի Մ.Գոշի փողոցի թիվ 74/4 հասցեի 17580.5քմ հողամասը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Ա. Մարտիրոսյան
7. Դիլիջան համայնքի մանկապարտեզների մեկ սանին հասանելիք սննդի նվազագույն չափ սահմանելու մասին:
Զեկ.Ա.Մարտիրոսյան
8. Դիլիջան համայնքի 2019թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխության մասին:
Զեկ.Ա.Մարտիրոսյան
9. Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող <<Հատուկ պահպանվող տարածքների հողերից>> 1210.2քմ մակերեսով հողամասը և <<Գյուղատնտեսական նշանակության հողերից>> 3664.8քմ մակերեսով հողամասը աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին:
Զեկ. Ա.Մարտիրոսյան
10. Հողի հարկի և գույքահարկի տույժի արտոնություն սահմանելու մասին:
զեկ. Ա.Մարտիրոսյան
11. Անհատույց օգտագործման նպատակով տրամադրված գույքը Դիլիջանի համայնքապետարանի գույքացանկում ընդգրկելու մասին:
Զեկ.Ա.Մարտիրոսյան
12. Դիլիջանի համայնքապետարանի գույքացանկում ընդգրկելու մասին:
Զեկ. Ա.Մարտիրոսյան

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**


Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 191-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 13/2 ՀԱՍՑԵԻ 373.5ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՖՈՆԴՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարի 2019թ. նոյեմբերի 21-ի թիվ 725-Ա որոշմամբ առաջարկվել էր պետականորեն գրանցել Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 13/2 հասցեի 373.5քմ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի, Դիլիջան քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 13/2 հասցեի 373.5քմ հողամասը, որը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն, ընդգրկել Դիլիջան համայնքի հողերի ֆոնդում, որպես Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հող:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝** **ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 192-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ 2-ՐԴ ՆՐԲ. ԹԻՎ 8/6 ՀԱՍՑԵԻ 950.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՖՈՆԴՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարի 2019թ. նոյեմբերի 27-ի թիվ 740-Ա որոշմամբ առաջարկվել էր պետականորեն գրանցել Դիլիջան քաղաքի Խորհուրդների փողոցի 2-րդ նրբ. թիվ 8/6 հասցեի 950.0քմ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի, Դիլիջան քաղաքի Խորհուրդների փողոցի 2-րդ նրբ. թիվ 8/6 հասցեի 950.0քմ հողամասը, որը համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված է որպես ֆիզիկական անձի սեփականություն, ընդգրկել Դիլիջան համայնքի հողերի ֆոնդում, որպես Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հող:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 193-Ա

## ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում Դիլիջանի համայնքապետարանին անհատույց օգտագործման նպատակով տրամադրվել է գույք:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

«Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում Դիլիջանի համայնքապետարանին անհատույց հանձնված ներքոնշյալ գույքը ընդգրկել Դիլիջանի համայնքապետարանի գույքացանկում ՝ համապատասխան քանակներով և արժեքներով.

| Անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումարը . /դրամ/ |
|---|---|---|---|---|
| Պահարան+ապակե պահարան | հատ | 1 | 70850 | 70850 |
| Պահարան | հատ | 1 | 44200 | 44200 |
| Սեղանի բաց գույնի անկյուն | հատ | 5 | 13400 | 67000 |
| Պահարան | հատ | 1 | 70850 | 70850 |
| Գրասեղան | հատ | 2 | 33333 | 66666 |
| Շարժական տակդիր | հատ | 4 | 40000 | 160000 |
| Գրասեղան | հատ | 3 | 56666.7 | 170000.1 |
| Պահարան | հատ | 1 | 83000 | 83000 |
| Պահարան | հատ | 1 | 104000 | 104000 |
| Համակարգչի սեղան | հատ | 3 | 31700 | 95100 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 194

### ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 34/4 ՀԱՍՑԵԻ 400.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Արամ Լենիկի Սարգսյանը՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոցի թիվ 34/1 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան սպասարկման 400.0քմ հողամասին կից գտնվող /Կամոյի փողոցի թիվ 34/4 հասցեի/ 400.0քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 400.0քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոցի թիվ 34/4 հասցեի 400.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 496800 /չորս հարյուր իննսունվեց հազար ութ հարյուր/ դրամ արժեքով օտարել քաղ. Արամ Սարգսյանին:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոցի թիվ 34/4 հասցեի 400.0քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 496800 /չորս հարյուր իննսունվեց հազար ութ հարյուր/ դրամ արժեքով քաղ. Արամ Սարգսյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 195-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 42/1 ՀԱՍՑԵԻ 134.2ՔՄ ԵՎ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 42/2 ՀԱՍՑԵԻ 57.6ՔՄ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Արման Աղվանի Ղալիջյանը՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոցի թիվ 40 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող կիսակառույց բնակելի տան /ավարտվածության աստիճանը անավարտ/ սպասարկման 600.0քմ հողամասին կից գտնվող Անդրանիկի փողոցի թիվ 42/1 հասցեի 134.2քմ մակերեսով և Անդրանիկի փողոցի թիվ 42/2 հասցեի 57.6քմ մակերեսով հողամասերն ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:

Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 134.2քմ և 57.6քմ մակերեսներով հողամասերը չեն համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չեն գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում են Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում:

Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոցի թիվ 42/1 հասցեի 134.2քմ հողամասը և Անդրանիկի փողոցի թիվ 42/2 հասցեի 57.6քմ հողաման ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, համապատասխանաբար, 166676 /հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր յոթանասունվեց/ դրամ և 71539 /յոթանասունմեկ հազար հինգ հարյուր երեսունինը/ դրամ արժեքներով օտարել քաղ. Արման Ղալիջյանին:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Անդրանիկի փողոցի թիվ 42/1 հասցեի 134.2քմ հողամասը և Անդրանիկի փողոցի թիվ 42/2 հասցեի 57.6քմ հողաման ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, համապատասխանաբար, 166676 /հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր յոթանասունվեց/ դրամ և 71539 /յոթանասունմեկ հազար հինգ հարյուր երեսունինը/ դրամ արժեքներով քաղ. Արման Ղալիջյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 196-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՇ ԳՅՈՒՂԻ Մ.ԳՈՇԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 74/4 ՀԱՍՑԵԻ 17580.5ՔՄ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ (ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՆ) ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարին է դիմել Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու Տավուշի թեմի առաջնորդ Տեր Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը՝ տեղեկացնելով Գոշավանք վերածննդի նախագծի, նախագծի շրջանակներում Գոշավանքին հարակից մոտ 3.0հա մակերեսով հողհատկացման անհրաժեշտության մասին և վերջինիս վերաբերյալ նախնական համաձայնություն ստանալու խնդրանքով:

Դիլիջանի համայնքի ավագանին 2019թ. հունիսի 26-ի թիվ 92-Ա որոշմամբ տվել է նախնական համաձայնություն վերը նշված հողհատկացման վերաբերյալ:

Կատարվել է տեղազննման և չափագրման աշխատանքներ, որի արդյունքում կազմված սխեմայի համաձայն՝ նշված հողամասի մակերեսի չափը կազմել է 17580.5քմ: Վերջինիս նպատակային նշանակությունը, ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն, փոփոխվել է որպես հատուկ պահպանվող տարածքների հողերի, մասնավորապես՝ պատմական և մշակութային նշանակության: Վերջինիս նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցվել է /սեփականության վկայական՝ թիվ 13122019-11-0052/

Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 17580.5քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է հողերի տարածագնահատման տասնհինգերորդ գոտում:

Դիլիջանի համայնքի ղեկավարը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացրել Դիլիջան համայնքի Գոշ գյուղի Մ.Գոշի փողոցի թիվ 74/4 հասցեի 17580.5քմ հողամասը Գոշավանք վերածննդի նախագծի շրջանակներում, եկեղեցապատկան կառույցների շինարարության ու դրանց սպասարկման նպատակով, Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու վերաբերյալ առաջարկություն:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Գոշ գյուղի Մ.Գոշի փողոցի թիվ 74/4 հասցեի 17580.5քմ հողամասը Գոշավանք վերածննդի նախագծի շրջանակներում, եկեղեցապատկան կառույցների շինարարության ու դրանց սպասարկման նպատակով, Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու վերաբերյալ առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 197-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՄԵԿ ՍԱՆԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՔ ՍՆՆԴԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42 կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջանի համայնքի մանկապարտեզների մեկ սանին հասանելիք սննդի նվազագույն չափի սահմանել օրական 270 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թ. հունվարի 1-ից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 198-Ն

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 141-Ն որոշմամբ հաստատված համայնքի 2019 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.
Դիլիջան համայնքին ՀՀ Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 1453-Նորոշմամբ ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով հատկացվել է 26750900 ՀՀ դրամ:Դիլիջան համայնքի բյուջեի «Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման սուբվենցիա» եկամուտ սահմանել 26750900 ՀՀ դրամ:

«09-01-01-Նախադպրոցական կրթություն» գործառնական դասակարգմամբ ծախսերի կատարման նախահաշվում «5113--Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» ծախսային հոդվածին ավելացնել 26750900 ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մ[illegible]րզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 199-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ <<ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ>> 1210.2ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ <<ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ>> 3664.8ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող <<Հատուկ պահպանվող տարածքների հողերից>> 1210.2քմ մակերեսով հողամասը և <<Գյուղատնտեսական նշանակության հողերից>> 3664.8քմ մակերեսով հողամասը աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված պայմաններով և մեկնարկային գներով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող <<Հատուկ պահպանվող տարածքների հողերից>> 1210.2քմ մակերեսով հողամասը և <<Գյուղատնտեսական նշանակության հողերից>> 3664.8քմ մակերեսով հողամասը աճուրդի միջոցով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջակությանը և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Աղյուսակ.
ՀՀ Դիլիջանի համայնքի ավագանու
2019թ. դեկտեմբերի 27-ի թիվ 199-Ա որոշման

Դիլիջանի համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ-վաճառք

| Հ/հ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը /հողատեսքը/ | Օգտագործման նպատակը | Մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | գ.Թեղուտ, 2-րդ փողոց 41/2 | 11-029-0055-0004 | 1210.2 | Հատուկ պահպանվող տարածքների հող | հանգստի համար նախատեսված | հանգստի նշանակության օբյեկտի կառուցման | 278,346 | չկան |
| 2 | գ.Հաղարծին | 11-042-1051-0002 | 3664.8 | Գյուղատնտեսական նշանակության հող | արոտավայր | արոտավայր | 366,480 | չկան |

*Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի Ժ/Պ* *Ս.Եգանյան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 200-Ա

## ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին են դիմել «Հայաստանի կոմպոզիտորների միություն» ՀԿ-ն հայտնելով, որ հողի հարկի մայր գումարը՝ 753798 դրամ և գույքահարկի մայր գումարը՝ 1527767դրամը վճարել է ամբողջությամբ: Խնդրել է գույքահարկի և հողի հարկի տույժի արտոնություն սահմանել:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 903-Ն որոշումը, ղեկավարվելով «Գույքահարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հողի հարկի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

«Հայաստանի կոմպոզիտորների միություն» ՀԿ-ին սահմանել գույքահարկի և հողի հարկի տույժի արտոնություն և ազատել գույքահարկի և հողի հարկի տույժերից՝

- գույքահարկի տույժ - 497031դրամ
- հողի հարկի տույժ - 194983դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -2

| | |
|---|---|
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ | ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ |
| ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ | ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ |
| ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ | |
| ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ | |
| ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ | |
| ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 201-Ա

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքապետարանին «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի կողմից իրականացված «Անասնապահության զարգացում Հայաստանում՝ հարավ-հյուսիս» ծրագրի շրջանակներում անհատույց օգտագործման նպատակով տրամադրվել է գույք:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

«Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի կողմից Դիլիջանի համայնքապետարանին անհատույց հանձնված ներքոնշյալ գույքը ընդգրկել Դիլիջանի համայնքապետարանի գույքացանկում ՝ համապատասխան քանակներով և արժեքներով.

| Անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումարը /դրամ/ |
|---|---|---|---|---|
| Պահարան | հատ | 1 | 80000 | 80000 |
| Պահարան փոքր | հատ | 1 | 60000 | 60000 |
| Գրասեղան | հատ | 1 | 40000 | 40000 |
| Աթոռ | հատ | 4 | 7500 | 30000 |
| Սառնարան CENTEK CT -1703-90SD | հատ | 1 | 54160 | 54160 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 264160 |

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝** **ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85, dilijan1@yahoo.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 202-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԱՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքապետարանի աշխատանքները առավել արդյունավետ դարձնելու, ինչպես նաև նոր սարքավորումներով վերազինելու նպատակով Դիլիջանի համայնքապետարանը ձեռք է բերել համակարգչային տեխնիկա:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջանի համայնքապետարանի կողմից ձեռք բերված ներքոնշյալ գույքը ընդգրկել Դիլիջանի համայնքապետարանի գույքացանկում ՝ համապատասխան քանակներով և արժեքներով.

| Անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումարը /դրամ/ |
|---|---|---|---|---|
| Տպիչսարք PANTUM P2207 | հատ | 1 | 36300 | 36300 |
| Համակարգիչ CPU Intel Core i3-8100 | հատ | 3 | 188200 | 564600 |
| Բազմաֆունկցիոնալսարք HP DJ 2130 | հատ | 3 | 48000 | 144000 |
| Ստեղնաշար CrownMicro CMK-F02B | հատ | 1 | 3900 | 3900 |
| Մկնիկ CrownMicro CMM-128 | հատ | 3 | 2400 | 7200 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 756000 |

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ԴԱՎԹՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԹԱՄՐԱԶՅԱՆ ԱՐԳԱՄ

ՄԵԼԻՔՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄՈՒԿՈՒՉՅԱՆ ՎԱՐԴԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**